

ԾԱՆԱԶՈՒՄ ԷՔ ԱՐԴԵՕՔ.



անաշո՛ւմ էք արդեօք այն աշխարհն ահաւոր,
Ուր, ասո՛ւմ են, մարդիկ բորենի ծնեցին.

Ճանաշո՛ւմ էք արդեօք այն կղզին մենաւոր,
Ուր խնջո՛յք են անու՛մ մինչ հիմա զայլ ու ցին...

Մեռելներն այն երկրու՛մ չեն թաղու՛մ հողի տակ.

Ազաւներն են նրանց օրհներգու՛մ միշտ անհոգ.---

Քաղաքներն անշշունջ, աւաններն անընակ,

Քարացած այդ աշխարհն ճանաշո՛ւմ էք արդեօք...

Ձէ՛ք գտնի դուք այնտեղ մարդկային ոչ մի շունչ.

Նրա չափ ոճիրներ չի տեսել դեռ ոչ ոք.

Դիակներ են փռուած ամենուր մահաշունչ,

Սովալլուկ կատուններն են ծչու՛մ անամոք:

Եւ երկիրն այդ թշուառ, աշխարհն այդ ահաւոր,

Շատ անգա՛մ է տեսել թէ՛ արին, թէ՛ աւեր,

Շատ անգա՛մ է անվախ դէմ դրել դարաւոր,

Սանճարձակ հողմերի արշաւին մահաքեր:

Եւ նոյն իսկ օրհասի տազնապի ժամանակ

Եռացե՛լ է նա միշտ, որ կըզայ մի սուրբ օր,

Երբ պիտի չքանան խենթ հողմերն համարձակ,

Երբ պիտի վերանան տանջանքներն ահաւոր:

Եռացե՛լ է նա միշտ, թէ խուժանն այն վայրի,

Որ իր կեանքն է լափել ողջ դարեր շարունակ,

Վերջապէս մի սուրբ օր պիտ գլուխ խոնարհի

Իր մատաղ, հանճարեղ սերնդի ոտքի տակ:

Միշտ ըմբոստ եւ անահ, միշտ հպարտ եւ յաղթող,

Թէեւ միշտ միայնակ, անպաշտպան եւ անօգ,

Եւ իտե՛ան հողմերի արշաւին դէմ դնող

Դիւթական այդ աշխարհն ճանաշո՛ւմ էք արդեօք...

Դանիէլ Գրիգորեան.

Ուսանող մեմբրանի Բ. լսարանի.